

## «ԸՆՏԱՆԻՔ» ԾՐԱԳԻՐ

### Ո՞Վ ԿԱՐՈՂ Է ԱՊԱՅՈՎԱԳՐՎԵԼ

Ապահովագրվել կարող է ցանկացած գործունակ ֆիզիկական անձ (18-70 տարեկան) և իր ընտանիքի անդամները (3-70 տարեկան):

Ընտանիքի անդամներ են հանդիսանում՝

- կինը (ամուսինը)
- երեխաները (այդ թվում՝ որդեգրված)
- ամուսինների ծնողները, քույրեր, եղբայրներ, ովքեր հիմնական ապահովագրված անձի հետ միասին վարում են ընդհանուր տնտեսություն

### Ո՞Վ ՉԻ ԿԱՐՈՂ ԱՊԱՅՈՎԱԳՐՎԵԼ

- I, II խմբի հաշմանդամները, «Հաշմանդամ երեխա» կարգավիճակ ունեցող անձինք
- կայուն նյարդային կամ հոգեբանական խախտումներով և/կամ հիվանդություններով տառապող անձինք
- անձինք, ովքեր հաշվառված են նյարդահոգեբանական, նարկոլոգիական և/կամ հակատուբերկուլյոզային դիսպանսերներում
- ստացիոնար, ամբուլատոր բուժման կամ հետազոտության մեջ գտնվող անձինք (մինչև նրանց լրիվ բուժվելը)
- ՁԻԱՅ-ով կամ այլ իմունոդեֆիցիտային հիվանդություններով անձինք
- հետախուզման մեջ գտնվող կամ ազատագրկման դատապարտված անձինք
- առողջական վիճակից ելնելով՝ մշտական ինսամբի կարիք ունեցող անձինք

### Ի՞ՆՉՆ Է ՀԱՄԱՐՎՈՒՄ ԱՊԱՅՈՎԱԳՐՎԿԱՆ ՊԱՏԱՅԱՐ

- մարմնական վնասվածքներ,
- I, II խմբի հաշմանդամության, «Հաշմանդամ երեխա» կարգավիճակի ձեռք բերում
- մահ

որոնք առաջացել են ստորև նշվածի հետևանքով.

- դժբախտ պատահարի
- սիսալ բժշկական մանիպուլյացիաների
- քիմիական նյութերով և կենսաբանական ծագման թույլներով (այդ թվում՝ բոտուլոտոքսինով) հանկարծակի սուր թունավորման
- շնչահեղձման՝ շնչուղիներ օտար մարմնի հանկարծակի ընկնելու
- ջրահեղձման
- անաֆիլակտիկ շոկի
- մարմնի գերսառեցման

## ԻՆՉ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐՈՎ ԿԱՐԵԼԻ Է ԱՊԱՅՈՎԱԳՐԵԼ

ՖԻԶՍՎԱԾ ԳՈՒՄԱՐՈՎ ՀԱՏՈՒՑՈՒՄ	
ՏԱՐԲԵՐԱԿ 1	ՏԱՐԲԵՐԱԿ 2
<ul style="list-style-type: none"> <li>Մարմնական վնասվածք</li> </ul>	
<ul style="list-style-type: none"> <li>I, II, III խմբի հաշմանդամություն</li> <li>«Հաշմանդամ երեխա» կարգավիճակի ձեռք բերում</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>I, II, III խմբի հաշմանդամություն</li> <li>«Հաշմանդամ երեխա» կարգավիճակի ձեռք բերում</li> </ul>
<ul style="list-style-type: none"> <li>Մահ</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>Մահ</li> </ul>

ԲԺՇԿԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄ	
ՏԱՐԲԵՐԱԿ 1	ՏԱՐԲԵՐԱԿ 2
<ul style="list-style-type: none"> <li>Մարմնական վնասվածք</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>Մարմնական վնասվածք</li> </ul>
	<ul style="list-style-type: none"> <li>I, II, III խմբի հաշմանդամություն</li> <li>«Հաշմանդամ երեխա» կարգավիճակի ձեռք բերում</li> </ul>
	<ul style="list-style-type: none"> <li>Մահ</li> </ul>

## ԻՆՉԸ ՉԻ ՀԱՄԱՐՎՈՒՄ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ

- Ապահովագրված անձի կողմից առանց տվյալ կարգի վարորդական իրավունքի փոխադրամիջոց վարելու կամ փոխադրամիջոցի վարումը տվյալ կարգի փոխադրամիջոցի վարորդական իրավունք չունեցող անձին փոխանցելու հետևանքով
- Ապահովագրված անձի կողմից ալկոհոլային, թմրանյութային կամ տոքսիկ հարբեցման վիճակում փոխադրամիջոց վարելու կամ ալկոհոլային, թմրանյութային կամ տոքսիկ հարբեցման վիճակում գտնվող անձին փոխադրամիջոցի վարումը փոխանցելու հետևանքով
- Ապահովագրված անձի ալկոհոլային թունավորման հետևանքով կամ առանց բժշկի նշանակման (կամ բժշկի նշանակմամբ, սակայն նրա կողմից նշված դեղաքանակի խախտմամբ) թմրանյութերի, տոքսիկ և հոգեմետ նյութերի օգտագործման արդյունքում Ապահովագրված անձի թմրանյութային կամ տոքսիկ հարբեցման և/կամ թունավորման հետևանքով
- 14 տարեկան և բարձր տարիք ունեցող Ապահովագրված անձի ալկոհոլային, ինչպես նաև թմրանյութային թունավորման հետևանքով, եթե իրավասու մարմինների կողմից չի սահմանվել դրանց բռնի ներարկման, սխալմամբ կամ ստիպողաբար օգտագործման փաստը
- 14 տարեկան և բարձր տարիք ունեցող Ապահովագրված անձի կողմից դիտավորյալ հանցանք գործելու հետևանքով
- Ապահովագրված անձի մոտ զարգացած հոգեկան հիվանդության հետ կապված գործողությունների հետևանքով
- Մինչև ապահովագրվելը Ապահովագրված անձի ստացած մարմնական վնասվածքի, ինչպես նաև դրա հետևանքների հետևանքով
- 14 տարեկան և բարձր Ապահովագրված անձի ինքնասպանության (ինքնասպանության փորձի) արդյունքում, բացառությամբ այն դեպքերի, երբ Ապահովագրված անձը հասցվել էր նման վիճակի երրորդ անձանց անօրինական գործողությունների արդյունքում

- 14 տարեկան և բարձր Ապահովագրված անձի կողմից ինքն իրեն դիտավորյալ մարմնական վնասվածք պատճառելու հետևանքով
- Ազատագրվման վայրերում Ապահովագրված անձի հետ տեղի ունեցած դժբախտ պատահարի արդյունքում
- ՁԻԱՅ-ով հիվանդանալու հետևանքով
- Ապահովագրված անձի կողմից սպորտի վտանգավոր տեսակներով պրոֆեսիոնալ զբաղվելու (ավտո և մոտոսպորտ, պարաշյուտով թռիչքներ, կոնտակտային մենամարտեր, ալպինիզմ, լեռնային և ջրային սպորտաձևեր, դահուկասահք, ձիասպորտ և այլն) հետևանքով, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ
- Անձանց հետ, որոնք պատկանում են «ապահովագրման ենթակա չեն» բաժնում նշված անձանց կատեգորիայի

## ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ապահովագրական ընկերությունն ազատվում է հատուցում կատարելու պարտավորությունից, եթե պատահարն առաջացել է՝

- միջուկային պայթյունի, ճառագայթման կամ ռադիոակտիվ վարակման ներգործության արդյունքում,
- ռազմական գործողությունների, ինչպես նաև զորաշարժերի կամ այլ ռազմական միջոցառումների արդյունքում,
- քաղաքացիական պատերազմի, ցանկացած տիպի ժողովրդական հուզումների կամ գործադուլների, ահաբեկչական գործողությունների արդյունքում:

## ԻՆՉ ԱՐԺԵ

Ապահովագրական գումար 1 անձի գծով ԳՅ դրամ	Ապահովագրավճար ԳՅ դրամ			
	Տարբերակ 1 (մարմնական վնասվածքները ներառյալ)	Տարբերակ 2 (առանց մարմնական վնասվածքների)	Տարբերակ 3 (առանց մարմնական վնասվածքների)	Տարբերակ 4 (առանց մարմնական վնասվածքների)
500,000	5,000	3,100	12,000	14,500
700,000	6,200	3,900	15,400	18,500
1,000,000	8,500	5,300	18,500	23,000
1,500,000	12,300	7,700	20,600	27,800
2,000,000	16,300	10,200	22,400	32,400